17 հունիսի 2013 թվականի N 453 -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ 1998 ԹՎԱԿԱՆԻ
ՆՈՅԵՄԲԵՐԻ 6-ի N 620 ՈՐՈՇՄԱՆ
ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

1. Հայաստանի Հանրապետության վարչապետի 1998 թվականի նոյեմբերի 6-ի «Պետական կառավարման մարմինների աշխատողների առավելագույն թվաքանակ և ղեկավարների տեղակալների թվաքանակ սահմանելու մասին» N 620 որոշման հավելվածի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

Նախարարություն, գործակալություն, տեսչություն	Աշխատողների առավելագույն թվաքանակը (հաստիքային միավոր)	որից՝ ղեկավարի տեղակալներ	
		ընդամենը	առաջին տեղակալ
Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմ	3126	4	1
կառուցվածքային ստորաբաժանումներ	110	4	1
Քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալություն	25	1	-
Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն	111	1	-
Իրավական ակտերի փորձաքննության գործակալություն	19	-	-
Օրինականության վերահսկողության տեսչություն	25	1	-
Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայություն	413	3	-
Քրեակատարողական ծառայություն	2423	4	1

2. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին՝ ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի հաստիքային միավորների ավելացումը կատարել նախարարության աշխատակազմի պահպանման ծախսերում «Այլ վարձատրություններ» հոդվածով նախատեսված միջոցների հաշվին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

2013 թ. հունիսի 17
Երևան